

արար մատենագիրներէն Իտիրիս կը յիշատակէ աւետարանական յիշատակը Սելովամի նկատմամբ, մինչ Մուգատտասի 985ին կը պատմէ թէ Սելովամը կ'ուողէ ընդարձակ պարտէզներ, որ քաղաքին աղքատներուն անուշով վազփ եղած են. իսկ 1047 ին Նասիր-ի-Սոսրով պարսիկ բանաստեղծը՝ որ իր ձանրորդութիւնը մայրենի լեզուովը գրած է, կը հաստատէ որ՝ եթէ մէկը լուացուի Սելովամի մէջ կը բուժուի իր ախտերէն, և կ'աւելցնէ թէ Սելովամի մէջ հաստատուած են գթութեան զանազան յարկեր, ուր կը խնամուին հիւանդները երուսողէմ քաղաքին ծախքովը. հոն շինուած է նաև հիւանդանոց մը՝ ուր կան թոշակաւոր բժիշկներ:

3. Սելովամի մօտ գտնուող հայկական վանքեր.

Հայաստանի նախարարութիւններէն ոմանք, ինչպէս Ս. Տեղերու այլևայլ կէտերուն վրայ, նոյնպէս Սելովամի մօտ, իբր նուիրական տեղ մը, վանքեր շինած են, հոն պատսպարելու համար այն բազմաթիւ հայ ուխտաւորները, որոնք իրենց հոգևոր և մարմնաւոր ցաւերուն դարմանումին համար կը գիմէին Սելովամի փրկարար ջուրերուն: Հայք բիւզանդական տիրապետութեան ժամանակ ունէին շատ վանքեր Սելովամի շրջակաները. տեղական պայմանները կը զիւրացնէին նոյն վանքերու շինութիւնները: Պաղեստինագէտ Glermont-Ganneau կը զիտէ թէ Սելովամի մօտ գտնուող Ակեղղամայի բլուրներուն հին օրերէն մնացած յերուսական քարայրները վանականներուն կողմէն կը գործածուէին իբր բնակարան, հերիք է որ մէն մի վանական կարենար իրեն համար ճարել ջրհոր մը և փոքրիկ պարտէզ մը: Վանականներու տեղական բազմաթիւ խմբաւորումներ կը կազմէին միաբանութիւն մը, որ շուտով կ'ուռնենար իր եկեղեցին. հաւանական է որ այս մտածումը ճիշդ ըլլայ և այդ պատճառաւ է որ Անաստաս վրդ. իր Վանօրէից Յուցակովը շատ վանքեր ցոյց կու տայ մեզ Սելովամի մէջ: Հոս կը դնենք նոյն սրբավայրին մէջ որոշ կերպով յիշուած հետեւեալ չորս վանքերը, որոնք են.

1. — Նորայակնի, անո՛ս ի գերեզման Եսայեայ մարգարհին, ի նոյն կողմն Զիքննեսց շերին, գործայժմ քակեալ են սահլիկ. Սելովամի մօտ էր Եսայի մարգարէին գերեզմանը, ինչպէս կը վկա-